
ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՌԱՆԻՍ ԿՈԹՈՂՆԵՐԻ ԹՎԱԳՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՔԱՍԱՂԻ ԽՈՅԱԿԸ

ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

XX դ. սկզբներին հայ ձարտարապետության և արվեստի պատմության երախտավորներ Թորոս Թորամանյանը և Գարեգին Հովսեփյանը զիտական շրջանառության մեջ դրեցին մի քանի տասնյակ քառանիստ կոթողներ: Ներկայացվածք համարելով գերազանցապես վաղ միջնադարում կանգնեցված ու քրիստոնեական՝ նրանք միաժամանակ կարծում էին, որ Կարմրաքար (Դարրանդ), Գառնահովիտ (Աղիաման), Կարսի Ազարակ գյուղերի կոթողները պատկանում են հեթանոսական շրջանին¹:

Մեզ հասած հուշակոթողների, ինչպես նաև ձարտարապետական հուշարձանների վրա առկա պատկերաբանդակների քննությամբ Բ. Առաքելյանը հանգեց այն համոզման, որ դրանց «Ժամանակագրական սահմանները կարելի է հաստատել բավարար որոշակիությամբ, քանզի ճշգրիտ հայտնի է և նրանցից ամենավաղերի (IV դ. 60-ական թ.) և ամենաուշերի (VII դ. 40-50-ական թթ.) ժամանակը: Առաջին դեպքում խոսքը գնում է հայ Արշակունի թագավորների դամբարանի պատկերաբանդակների, երկրորդ դեպքում՝ նշանավոր Զվարթնոց տաճարի պատկերաքանդակների մասին»²:

Այս տեսակետն անվերապահորեն ընդունեցին հաջորդ բոլոր ուսումնասիրողները: Ուշագրավն այն է, որ նրանք՝ մատնանշելով և չվիճարկելով կոթողների վրա հեթանոսական պատկերների առկայության փաստը, դրանք համարեցին քրիստոնյաների կողմից կանգնեցված կոթողներ: Այս կերպ, կամա թե ակամա, բացառվեց մեզ հասած հուշարձանների մեջ հեթանոսական կոթողների առկայության հնարավորությունն անզամ:

Նախ նկատնենք, որ Աղձքի դամբարանի կառուցման «Ճշգրիտ» ժամանակը հայտնի չէ: Փակստու Բուզանդի և Սովուն Խորենացու տեղեկությունները վերաբերում են ոչ թե դամբարանի կառուցմանը, այլ՝ Արշակունի թագավորների վերաբաղմանը: Եվ ապա՝ դեռևս Թ. Թորամանյանը դամբարանը համարում էր հեթանոսական շրջանի կառույց: «Քրիստոնեական շրջանի 5-րդ դարու հուշարձաններից զատ, կա նաև քանդակագրդ ծածկույթավոր դամբարան, որը նախաքրիստոնեական լինելու ամեն հավանականություն ունի, բացի արևելյան կողմի փոքրիկ

¹ Թ. Թուամանյան. Նյութեր հայկական ձարտարապետության պատմության, հ. I, Երևան, 1941, էջ 23, 40, գ. Հովհաննես և առաջանացու տեղեկությունները վերաբերում են ոչ դամբարանի կառուցմանը, այլ՝ Արշակունի թագավորների վերաբաղմանը:

² Բ. Առաքելյան. Հայկական պատկերաբանդակները IV-VII դարերում, Երևան, 1949, էջ 115:

կիսաբոլորակ խորանը, որն ավելի ուշ ժամանակ քրիստոնեականի վերածելու նշաններ ունի»³: Սակայն ինդիրն ամենայն Աղձքի դամբարանի թվագրության մեջ չէ:

Քառանիստ կոթողներն առանց բացառության քրիստոնեական համարելու հիմնական պատճառը, կարծում ենք, ընդունված այն կարծիքն է, թէ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո հեթանոսական բոլոր հուշարձանները վերացվել են: Անվիճելի է, որ քրիստոնեության կոիվը հեթանոս աստվածների դեմ էր, ու բոլոր «զատկածների» պատկերները պիտի վերացվեին: Նեռևս Արքար թագավորի ժամանակ, երբ ինքը և համարադրացիները քրիստոնեություն ընդունեցին, «զդուրս տաճարաց կրոցն փակեցին. և որ ի վերայ բազնին և սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամր»⁴: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո Տրդատ թագավորի ու Գրիգոր Լուսավորչի նախաձեռնությամբ արդեն վերացվեցին հեթանոս աստվածների պատկերները. «Եւ այսպէս ի բազում տեղեաց բառնային զգայթակղեցուցիչսն անմռունչս, զձուլեալսն, կոփեալսն կոփեալսն, քանդակեալսն, անպիտանսն, անօգուտսն, վնասակարսն...»⁵: Այսուհանդերձ, որեւէ վկայություն չունենք, և պարզ չէ՝ 301-ին բազինների ու սյուների վրա դրված հեթանոս աստվածների պատկերներն էին վերացնում ու դրանց փոխարեն ամենափրկիչ նշանի օրինակ խաչը կանգնեցնում, թէ՝ կոթողները կործանում էին հիմնովին: Եթե ընդունենք անգամ, որ հիմնովին էին կործանում, ապա, կարծում ենք, անհավանական է, որ քարակերտ կոթողների բեկորների վրա եղած պատկերները իսպատ վերացնելու և այդ քարակտորները երկրորդ անգամ օգտագործելու նկատառումով բոլոր քանդակները տաշեին: Այդ բեկորները կամ պիտի օգտագործեին որպէս շինաքար, կամ էլ պիտի թաղեին հողի տակ: Հայաստանի Հանրապետության այժմյան տարածքում առկա ավելի քան երկու հարյուր հուշակոթողներից մի քանիսն են միայն կանգուն, մնացածը մեզ է հասել բեկորների ձևով: Իսկ դրանք հայտնաբերվել են արտոնված և հատկապես շարտոնված պեղումների, տարբեր բնույթի շինարարական աշխատանքների ժամանակ, այսինքն՝ հողի տակից:

Հայոնի է, որ հեթանոսական շրջանում կոթողները կանգնեցվել են ոչ միայն աստվածներին պաշտամունք մատուցելու, այլև երկրի կամ առանձին համայնքների կյանքում կարևոր նշանակություն ունեցած տարրեր իրադարձությունները հավերժացնելու նպատակով: Ամենայն հավանականությամբ, վերջիններս պիտի զերծ մնային ոչնչացումից, անկախ այն բանից՝ հեթանոսական խորհրդանշաններ կրել են, թէ՝ ոչ:

Եվ, վերջապես, հեթանոսական շրջանում, ինչպէս և քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո էլ կոթողներ կանգնեցվել են հիմնականում զերեզման-

³ Թ. Թոքան մասն նաև նշանակություն պահպան է 40:

⁴ Մուղ սես և Խոք ու աղի Պատմութիւն Հայոց (այսուհետեւ՝ Մ. Խոք է նաև աղի), Տիգիսիս, 1913, գլ. Լ. Գ., էջ 152:

⁵ Աղաջական պատմություն, Երևան, 1983, էջ 442:

ների վրա: Թ. Թորամանյանը և Գ. Հովսեփյանը խնդրու առարկա հուշարձանները «գերեզմանական կոթողներ» էին անվանում: Արդ, ընդունել կամ մտածել անգամ, թե որեւէ, նույնիսկ մոլի քրիստոնյա կարող էր այդ կոթողներն ավերել, ասել է թե՝ պղծել իր կամ այլոց հեթանոս հարազատների գերեզմանները, պարզապես չի կարելի: Դրանց կործանման պատճառը, կարծում ենք, նույնն է, ինչ քրիստոնեական կոթողներինը՝ ժամանակը:

Առաջին դիտարկումը, որ պիտի հիմք հանդիսանա քառանիստ կոթողների թվագրության համար, հետևյալն է. անկախ այն բանից՝ հեթանոսական կոթողները քրիստոնյաներն են ավերել, թե շուրջ երկու հազարամյա դաժան ժամանակը, մեզ հասած բեկորների մեջ դրանց առկայությունը չի կարելի բացառել:

Քառանիստ կոթողները, առանց բացառության, քրիստոնեական համարելու կարծիքի ձևավորմանը մեծապես նպաստել է նաև այն, որ հուշարձանների վրա առկա բոլոր խաչերը, այդ թվում և շրջանի մեջ առնվածները, ուսումնասիրողները համարել են քրիստոնեական: Կոթողների թվագրման համար դրանք անառարկելի հիմք են հանդիսացել անգամ այն պարագայում, երբ խաչի նշանի կողքին, իրենց խև մեկնությամբ կան նաև հեթանոսական պատկերներ: Բազմաթիվ փաստացի տվյալների հիման վրա գիտականորեն ապացուցված իրողություն է այն, «որ խաչը իրեւ կրակը, արևը, փրկությունը և հավերժական կյանքը խորհրդանշող սրբազն նշան, շատ ավելի հնագույն է, քան քրիստոնեական կրոնը, քանզի երեան է եկել վերջինիս առաջացումից մի քանի հազար տարի առաջ...: Քրիստոնեական կրոնը փոխառել է խաչի նշանը ավելի հին՝ նախաքրիստոնեական հավատալիքներից»⁶:

Հայաստանում պեղումներից հայտնաբերվել են խաչի նշան կրող կիրառական արվեստի բազմաթիվ իրեր՝ զենքեր, խեցեղեն անորթներ, զարդեր, հմայիլներ: Ներկայացնելով և քննության առնելով այդ հարուստ նյութը՝ U. Եսայանը ենթադրում է, որ Հայաստանում արևի պաշտամունքը լայն տարածում է ունեցել II հազարամյակի կեսերից մինչև VI-V դ. Ք. ա., միաժամանակ համարում է, որ արևի պաշտամունքը, ոչ այդ չափով, բայց, անկասկած, տարածված է եղել նաև ավելի վաղ և ավելի ուշ ժամանակներում: Նկատենք, որ, բայց U. Խորենացու, Վաղարշակ թագավորի (Ք. ա. II դ.) օրոք հայկական պանթեոնում եղել են արևի ու լուսնի աստվածներ և գոյատելել են մինչև Որմիզդ Արտաշիր Սասանյանը (262-272 թթ.): Վերջինս դրանց փոխարեն մտցրեց կրակի պաշտամունքը⁷:

Հայաստանում հայտնաբերված հնագիտական նյութերը ևս հաստատում են, որ խաչի, այդ թվում նաև շրջանի մեջ առնված խաչի նշանը քրիստոնյաները չեն հորինել⁸: Մրա հետ մեկտեղ դրանք զայիս են հաստատելու ոչ պակաս կարևոր մի ի-

⁶ А. А. Н е յ ҳ а р դ տ. Происхождение креста. М., 1956, с. 18.

⁷ С. А. Е с а յ ն. Амулеты, связанные с культом солнца из Армении.— «Советская археология», 1968, № 2, с. 259. Մեր սույն հողվածի նկար 1-ում Զարխեց գյուղից հայտնաբերված հմայիլի պատկերն առնված է այս հողվածից:

⁸ U. Խ ո ր է ն ա ց ի. գլ. Ք, էջ 117, 216:

⁹ Դրա անհրաժեշտությունն ամենին չկար էլ: Հեթանոս բոլոր աստվածների մերժումը դեռևս չէր նշանակում նրանց գործառությների հետ կապված զաղափարների ու խորհրդանշանների մերժում:

բողոքություն ևս: Հնագույն հեթանոսական հմայիլների և վաղ միջնադարյան տաճարի վրա քանդակված խաչերի (նկ. 1) համարրումը՝ ժամանակաշրջանների, չափերի, նութի, կատարման տեխնիկայի զգալի տարրերություններով հանդերձ, ակներևորեն վկայում է, որ հազարամյակներ առաջ շրջանի մեջ առնված խաչի հորինվածքային տարրերը լուծումներն արդեն իսկ մշակված են եղել, և քրիստոնեական համարվող խաչերը պարզապես դրանց կրկնությունն են: Ասել է թե՝ այլ տվյալների բացակայության պարագայում, միայն խաչի առկայությունից, նրա հորինվածքի, ինչպես նաև առանձին տարրերի առանձնահատկությունից ելնելով, պարզապես անհնար է կորակը՝ խաչը հեթանոսական է, թե քրիստոնեական:

Մեր երկրորդ դիտարկումը հետևյալն է. քառանիստ կոթողների վրա շրջանի մեջ առնված հավասարաթև խաչի առկայությունը չի կարող անառարկելի հիմք հանդիսանալ կոթողները քրիստոնեական համարելու և ըստ այրմ թվագրելու համար:



Նկ. 1. Հմայիլներ. ա - Գետաշեն (Արցախ), թ - Արճիս (Լոռի), զ - Զարիսեց (Լոռի):

Որմնասյան խոյակներ. դ, զ - Երերուսլ, ե - Աշտարակի Ծիրանավոր:

Այժմ քննության առնենք Սպարան քաղաքի Քասաղի հնագույն տաճարի շրջապատից հայտնաբերված բազալտէ խոյակը (նկ. 2): Դրան առաջին անգամ անդրադարձել է Գ. Հովսեփյանը. «Կենդանական զլիտվ մարդկային քանդակներ տեսնում ենք և բազիլիք շենքերի խոյակների վերա, որի մի օրինակը Քասաղից բերել ենք Էջմիածնի թանգարանը. այսուեղ խոզի փոխարեն մի այլ կենդանու, գուցե, շան գլուխ: Անշուշտ այս երևույթի ծագումը Հայաստանում ավելի հին է, քայց հայկա-

Աստվածն էր ամենի արարիչը, ուրեմն և տիեզերք, լույս, արև, պտղաբերություն, անմահություն... զաղափարների ու խորհրդանշանների խսկական տերը: Հեթանոսները պարզապես մոլորության մեջ «չաստվածներ» պաշտելով՝ այդ ամենը նրանց էին վերաբերել: Եվ քրիստոնեացած հեթանոսները հազարամյակներ ի վեր իրենց ապավեն խաչը դարձրին քրիստոնեության խորհրդանշը, քնականաբար, ջանապետով այն կապել Քրիստոսի անվան հետ: Եվ ինչպես հեթանոսական պատարագի նույն գինին մեկնաբանեցին իբրև Քրիստոսի խաչի վրա ստացած վերքերից հոսած արյուն, այդպես էլ հնագույն նույն խաչը մեկնաբանեցին իբրև Քրիստոսի նշան:

կան քրիստոնեությունը այդ ավանդը գործադրել է նախնական մատենագրության մեջ, որպիսին Տրդատի և շրջապատի խոզակերպ դառնալու ավանդությունն է Ա-գարթանգեղոսի մեջ, նույնը նյութ դարձնելով և արվեստի մեջ¹⁰:

Բ. Առաքելյանը, ներկայացնելով այս խոյակը, այն համարում է IV-V դդ. քրիստոնեական հուշարձան, խաչը դիտում է իբրև քրիստոնեության խորհրդանշան, մյուս քանդակը իբրև «մի ճյուղ», իսկ «շան կամ խոզի գլխով» մարդու քանդակը չի մեկնաբանում՝ այն համարելով դեռևս անհասկանալի¹¹:

Լ. Ազարյանին է պատկանում խոյակի մանրամասն ու հանգամանալից քննությունը: Բուսական քանդակը համարելով կենաց ծառ՝ հեղինակն այն մեկնաբանում է իբրև հեթանոսական խորհրդանշան, խաչը՝ ի հակադրություն դրա, քրիստոնեական զաղափարների հիմնավորում, իսկ կենդանազուխ մարդու պատկերի մասին գրում է. «Նա ձախ ձեռքում ունի օղակ, աշում՝ ձող: Այս քանդակի իմաստը առաջին հայացրից անհասկանալի է, քանի որ հետազայի կոթողների քանդակներում տարածված Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի անվան հետ կապված լեզենդի իյուստրացիան չէ: Կարծում ենք, որ ֆիգուրը խորհրդանշում է հեթանոսությունը, ավելի կոնկրետ՝ կրակապաշտությունը: Այսպես, ասորա-բարեկանական արվեստից մի քանի զուգահեռներ հարկադրում են մեզ ենթադրելու, որ քանդակված ֆիգուրի ձեռքի առարկաները (օղակը և ձողը) արևի պաշտամունքին նվիրված հեթանոս քուրմերի կամ հենց արևի աստծու աստրիբուտներն են (խորհրդանիշները): Ասորա-բարեկանական Շամաշ աստծուն նվիրված տաճարում (Միպատ, այժմ Արու-Հարաբ) գտնված մի հարթաքանդակի վրա արևի աստվածը (Շամաշ) ձեռքին ունի նման օղակ և ձող: Այդպիսի ձող և օղակ ունի Շամաշը Շամուրաբի թագավորին օրենքներ հանձնելու տեսարանը պատկերող հանրահայտ քանդակում: Արդյոք սրանք հնարավորություն չեն տալիս մտածելու, որ մեր քանդակի կենդանագլուխ ֆիգուրը խորհրդանշում է արևապաշտությունը կամ հեթանոսությունը ընդհանրապես՝¹²: Կենդանազուխ մարդու պատկերի այս՝ ավելի քան համոզիչ մեկնաբանությունից հետո հեղինակը զայխս է մեզ համար անհասկանալի մի եզրահանգման, թե «Այսպիսով, Քասախի խոյակի քանդակները վաղ քրիստոնեական արվեստին բնորոշ սիմվոլիկ մտածելակերպով վերարտադրում են խաչի՝ որպես լուսի ու կենաց աղբյուրի (իմա Հիսուս Քրիստոս) և հեթանոսության՝ որպես անհմացության ու տգիտության (կենդանազուխ արարած) հակադրությունը»¹³:

Դառնանք խոյակին: Նախ կարևոր երկու դիտարկում: Առաջին. խոյակի հարթ, առանց քանդակի նիստը մյուս երեք նիստերի նման ուղղաձիգ առանցքի նկատմամբ թեքություն ունի: Այսինքն՝ խոյակը որևէ տեղ չի ագուցվել: Կենտրոնում այն միջանցիկ փորվածք ունի, ինչը նախատեսվում էր առանձին կանգնած հուշակոթողներում՝ հասուկ կապերի միջոցով խոյակը բնի հետ և կոթողը պսակող կերտ-

¹⁰ Գ. Հովհաննես Աշխարհիկ, էջ 61: Նկատենք, որ խոյակը Էօմիածնի թանգարանից տեղափոխվել է Երևան և գտնվում է Հայաստանի պատմության թանգարանում:

¹¹ Բ. Առաքելյան, էջ 42-43, նկ. 12:

¹² Լ. Արքայական պատմության հայկական քանդակը, Երևան 1975, էջ 23-25, նկ. 6, 7, 8:

¹³ Նույն տեղում, էջ 25:

վածքը խոյակին ամրացնելու համար: Արա հետ մեկտեղ խոյակը հիմքում քառակուսի կտրվածք ունի, ինչը բավարար ապացույց է, որ այն պատկանել է քառանիստ կոթողի և պաշտամոնքային որևէ շինության տարր չեր կարող լինել: Երկրորդ խոյակի միայն երեք նիստերի քանդակազարդ լինելու փաստը վկայում է, որ հարթ, առանց քանդակի նիստի հանդիպակաց երեսը խոյակի, ուրեմն և քառանիստ կոթողի զինավոր ճակատն է¹⁴.



Նկ. 2 Ապարան. Քասաղի խոյակի քանդակազարդ նիստերը:

Գ. Հովսեփյանը խոյակը թյուրիմացարար ընդունել է իբրև բազիլիկ շենքին պատկանող տարր և, թերևս, այդ պատճառով էլ այն համարել է քրիստոնեական:

Բ. Առաքելյանը խոյակի վրա քանդակված խաչը համարել է քրիստոնեական և այն հանգամանքը, որ նա խոյակի մյուս քանդակները չի մեկնաբանում, թույլ է տալիս ենթադրել, որ խոյակը IV–V դդ. թվագրման համար հիմք է ընդունել հենց խաչը:

Լ. Ազարյանը ևս խոյակը քրիստոնեական է համարում՝ խաչը՝ որպես Քրիստոսի նշան, դարձնելով պատկերագրական հորինվածքի մեկնաբանման ելակետ և հիմք: Կարծում ենք, որ խոյակը և խաչը առանց որևէ ապացույցի, անվերապահութեն քրիստոնեական համարելն էր պատճառը, որ ընդամենք երեք քանդակներում երկու հեթանոսական պատկերների առկայության դեպքում անզամ, հեղինակին բերեց, կարելի է ասել՝ պարտադրեց հորինվածքը մեկնաբանել իբր քրիստոնեության և հեթանոսության հակադրություն:

Նախ անհասկանալի է, թե քրիստոնեական համարվող կոթողի պատկերաշարքում ինչու պիտի Քրիստոսի խաչը՝ լույսի կենաց աղբյուրը, հակադրվեր չին կտակարանի կենաց ծառին: Նման որևէ օրինակ մեզ հայտնի չէ, իսկ խաչի և կենաց ծառի համադրության օրինակները քրիստոնեական արվեստում բազմաթիվ են: Եվ ապա, տարօրինակ չէ՝ արդյոք, որ քրիստոնեության և հեթանոսության հակադրությունը ցույց տալու նպատակ հետապնդող պատկերաշարքում ընդամենք երեք քանդակներից երկուսը հեթանոսական լինեին: Ավելին, հեթանոս աստծո կամ քրիստուկանը էլ տեղադրված լիներ կոթողի հենց ճակատին: Կամ՝ ինչպէ՞ սպիտակ պատկերն էլ տեղադրված լիներ կոթողի հենց ճակատին:

¹⁴ Բ. Առաքելյանը և Լ. Ազարյանը խոյակի նիստերին տեղադրված քանդակների հեթագայությանը կամ ուշադրություն չեն դարձրել, կամ էլ պարզապես անտեսել են այդ կարևոր հանգամանքը, որի հետևանքով ամրողական հորինվածքի կենտրոնը մի դեպքում համարվել է խաչը, մյուս դեպքում՝ կենաց ծառը:

տողը ընկալեր Քրիստոսի խաչի, այսինքն՝ «լուսի, կենաց աղբյուրի» գերադասությունը արևի աստծո նկատմամբ, այն դեպքում, երբ հազարամյակներ շարունակ և քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու շեմին խաչը, նույն լուսի ու կենաց աղբյուրը հենց արևի աստծո սրբազան նշանն էր:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո, երբ վերացվեցին հեթանոսական բոլոր կուտքերը՝ հեթանոս աստվածների պատկերները, հնարավոր էր արդյոք, որ նոր կրոնի ջատագովներից մեկը կոթող կանգնեցներ և քրիստոնեության հաղթանակը հեթանոսության նկատմամբ ցուցանելու՝ խավարի ու տղիտության, լուսի ու իմացության տարբերությունը նորահավատներին, ինչու չէ նաև հեթանոսներին ուսուցանելու, դաստիարակելու նպատակով կոթողի հենց ճակատին հեթանոս աստծո կամ քրսի պատկեր տեղադրեր:

Հնագոյն ժամանակներից մինչ օրս էլ կերպարվեասում բազմաթիվ ձևեր ու հնարքներ են մշակվել և կիրառվել հակադրություն, հաղթանակ, պարտություն... հասկացություններն արտահայտելու համար: Սակայն բանն այն է, որ Քասաղի խոյակի պատկերագրական հորինվածքում, անկախ նրանից՝ շրջանի մեջ առնված խաչը հեթանոսական նշան է, թե քրիստոնեական, հակադրության որևէ՝ անզամ հեռավոր ակնարկ պարզապես գոյություն չունի:

Նկատի առնելով այս, ինչպես նաև վերը բերված դիտարկումները, համարում ենք, որ Քասաղի խոյակի՝ քրիստոնեական, թե հեթանոսական շրջանին պատկանելու խնդրի լուծման ելակետ և հիմք պետք է հանդիսանա նրա պատկերագրական հորինվածքը:

Քասաղի խոյակի պատկերագրական շարքը բավականին պարզ է ու հստակ՝ մեկ կենդանագլուխ անձ, նրա աջ ու ձախ կողմերում մեկական խորհրդանիշներ: Կարծում ենք, անվիճելի է, որ ընդհանուր հորինվածքի բովանդակության զաղափարակիրը հորինվածքի կենտրոնում պատկերված միակ զիսավոր անձն է՝ կենդանագլուխ մարդը: Արդ, համաձայնելով կենդանագլուխ պատկերի Լ. Ազարյանի մեկնաբանությանը, կարող ենք ամրագրել, որ հորինվածքի զաղափարակիրը հեթանոս է¹⁵: Եվ եթե հորինվածքի զաղափարակիրը հեթանոս է, ապա անվիճելի է նաև, որ նրան ուղեկցող նշաններն էլ՝ շրջանի մեջ առնված խաչը և կենաց ծառը, հեթանոսական են:

Այսպիսով, խոյակի երեք պատկերները՝ կենդանագլուխ մարդ, խաչ, կենաց ծառ, հեթանոսական են: Իսկ սա միանշանակ վկայում է, որ Քասաղի բազալտէ խոյակը հեթանոսական է, այլ ոչ թե քրիստոնեական, ինչպես կարծել են մինչև այժմ:

Քրիստոնեական քառանիստ կոթողների մասին պատմական կամ վիմագրական որևէ կոնկրետ վկայություն չունենք: Եվ չնայած առաջին ուսումնասիրողների ձեռքի տակ եղած նյույթը՝ կոթողների քանակը, այսօր արդեն մի քանի անգամ կրկնապատկվել է, սակայն, ինչպես Գ. Հովսեփյանն էր նկատում, «ժամանակի վե-

¹⁵ Առաջադրված խնդրի առումով էական չէ կենդանագլուխ մարդը աստված է, թե՝ բուրժ:

բարերությամբ թվական նշանակել չենք կարող ոչ մեկի համար, այլ միայն դարաշրջաններ»¹⁶:

Քասաղի խոյակի դեպքում խնդիրը անհամեմատ բարդ է: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց մեկ-երկու դար հետո էլ հայաստանցիները համատարած քրիստոնյա շղարձան: Ավելին, հարկադրաբար քրիստոնեություն ընդունածների մի մասը ուրանում և վերադառնում էր իր նախկին հավատքին, աստվածների հին պաշտամունքն էր կատարում և կորողներ էր կանգնեցնում: Բերենք մեկ վկայություն միայն. «Յետ նորա (Ներսէս կաթողիկոսի – Գ. Գ.) ելիցն յաշխարհէս բազում գաւառք Հայոց և բազում մարդիկ ի հնութիւն դիւապաշտութեան դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուտս կանգնեցին ի համարձակութենէ բազաւորին Պապայ... բազում պատկերս կանգնեալ, երկիր պազանէին»¹⁷:

Ուստի, չբացառելով IV–V դդ. հեթանոսների կողմից կանգնեցված յինելու հնարավորությունը, ավելի հակված ենք կարծելու, որ Քասաղի քառանիստ կոթողը պատկանում է այն ժամանակներին, երբ հազարամյակներ գոյատևած՝ շրջանի մեջ առնված խաչը դեռևս չէր ընդունվել քրիստոնեության և Քրիստոսի խորհրդանշան:

ПРОБЛЕМА ДАТИРОВКИ АРМЯНСКИХ ЧЕТЫРЕХГРАННЫХ СТЕЛ И КАСАХСКАЯ КАПИТЕЛЬ

ГРИГОР ГРИГОРЯН

Резюме

В исследованиях, посвященных ранним памятникам, бытует точка зрения, что по принятии Арменией христианства как государственной религии все без исключения памятники, в том числе стелы, были уничтожены. И дошедшие до нас четырехгранные пилоны с рельефами, как и изображения крестов на них, относятся к христианству. Исследование памятника приводит к следующим выводам. Независимо от того, языческие памятники разрушены христианами или временем, нельзя полностью отрицать их существование среди дошедших до нас фрагментов. Крест в круге был священным знаком также для язычников, и его наличие не может служить основанием для увязывания памятников с христианством и их датировки в соответствии с этим. В композиции касахской капители носитель идеи, представленный в центре, единственный и основной персонаж – бог Солнца (или жрец), а справа и слева от него расположены языческие символы. То есть касахская капитель принадлежит язычеству, а не христианству, как это принято считать. Христианские памятники датируются по векам. В отношении касахской капители вопрос намного сложнее. После провозглашения христианства государственной религией, спустя еще один или два века,

¹⁶ *Q. Z n ψ u k ψ J w ū. ūψ. wψu., kψ 126:*

¹⁷ Φωψιανης Καραβογιαννης, Η απομνημονικη συλλογη της Εθνικης Βιβλιοθηκης, 1912, φλ. 1, λεπτομερεσιανη, σελ. 344-345.

часть населения Армении оставалась язычниками. Более того, многие принудительно обращенные отрекались от христианства и возвращались к прежней вере, почитая старых богов и воздвигая им обелиски. Таким образом, не исключая возможности воздвижения памятника язычниками в IV – V вв. можно считать, что касахская капитель относится к тем временам, когда крест в круге в течение тысячелетий еще не являлся символом христианства.

ON DATING OF THE ARMENIAN FOUR - FACED STELES AND THE KASAGH CAPITAL

GRIGOR GRIGORYAN

S u m m a r y

In the studies on early monuments, the accepted viewpoint is that after adopting Christianity as state religion in Armenia, all pagan monuments, as well as steles, were indiscriminately destroyed and the surviving four-faced steles with sculptural reliefs, also all the crosses found on them, are Christian. The examination brings to the following conclusion: irrespective of the fact that pagan monuments might have been destroyed by Christians or ravaged by the time, it cannot be excluded that the fragments that have come down to us present parts of pagan steles. The cross inscribed into a circle was a sacred symbol for the pagans as well, and the presence of such crosses cannot be assumed as a basis to consider these steles Christian and date them accordingly. In the iconographic composition of the Kasagh capital, there is no hint to any opposition, even a distant one. The focus of the subject-matter is made on the sole and main person depicted in the centre, the Sun God (or priest), flanked by his pagan symbols. Thus, the Kasagh capital is pagan, not Christian, as it is presumed. Christian steles are dated by centuries. In the case of the Kasagh capital, the problem appears to be much more complicated. Even one or two centuries after adopting Christianity as state religion, the Armenians did not become Christians universally. Moreover, part of the Armenians forcibly converted into Christians, renounced it and returned to their former faith, worshipping their old gods and erecting monuments to them. Thus, not excluding the possibility that the Kasagh capital was erected by the 4th–5th century pagans, it may be considered that it belongs to the times, when the cross inscribed into a circle that survived for thousands of years, had not yet been adopted as a symbol of Christianity.